Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2021թ. ապրիլի 17-ի թիվ 4 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«17» 04. 2021թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

I. **Ընդհանուր դրույթներ**

1. Գավառի պետական համալսարանի /այսուհետ՝ Համալսարան/ Վարշամ Ավետյանի անվան պատմության թանգարանը /այսուհետ՝ Թանգարան/ Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումն է, որն իրականացնում է ճանաչողական, կրթական, գիտահետազոտական, սոցիալ-մշակութային գործառույթներ:
2. Թանգարանի գործունեությունը կարգավորվում է ‹‹Մշակութային օրենսդրության հիմունքների մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:
3. Թանգարանի կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ է կատարում Համալսարանի գիտական խորհուրդը:

II. **Թանգարանի հիմնական նպատակներն ու խնդիրները**

4. Թանգարանի հիմնական նպատակներն են.

1) իրականացնել տեղեկատվական, ճանաչողական, ուսուցողական գործունեություն՝ ներկայացնելով պատմական տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված նյութական մշակութային ժառանգության նմուշները,
2) նպաստել երիտասարդների պատմական, հնագիտական ազգագրական գիտելիքների հարստացմանը, գեղագիտական, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ազգային արժեքների արմատավորմանը,
3) ներկայացնել Համալսարանի հիմնադրման պատմությունը:

5. Թանգարանի հիմնական խնդիրներն են.

1) ապահովել Համալսարանում պատմության, հնագիտության, ազգագրության, պատմական տարբեր դասընթացների և հարակից առարկաների սեմինար պարապմունքների, գործնական աշխատանքների անցկացումը,
2) զանգվածային լրատվության միջոցներով ներկայացնել թանգարանային նմուշները, կարևորել մշակույթի դերն ու նշանակությունը երիտասարդ սերնդի ազգային-հայրենասիրական դաստիարակության գործում,

3) ապահովել փոխհամագործակցություն Հայաստանի Հանրապետության թանգարանների, տեղեկատվական կենտրոնների, պետական և համայնքային մարմինների ու հասարակական կազմակերպությունների հետ, մասնակցել ‹‹Թանգարանային գիշեր›› հանրապետական միջոցառմանը, այլ ձեռնարկների:

III. Թանգարանի գործունեության հիմնական ուղղությունները և կարգը

6. Թանգարանի գործունեության հիմնական ուղղություններն են.

1) Համալսարանի ուսանողների և ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների աշակերտների համար կազմակերպել սեմինարներ, գործնական դասաժամեր պատմական դասընթացներից՝ հայոց պատմությունից, հին աշխարհի պատմությունից, հնագիտությունից, ազգագրությունից, դրամագիտությունից, մշակութաբանությունից, այլ առարկաներից,

2) անցկացնել դասեր թանգարանային գործի կազմակերպման, թանգարանային նյութերի գիտական մշակման, պահպանման և թեմատիկ թանգարանների ստեղծման մասին,

3) կազմակերպել ցուցահանդեսներ, ցերեկույթներ, տարբեր միջոցառումներ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Համալսարանի հիշարժան տարեթվերին, կրթության, գիտության և մշակույթի անվանի գործիչներին, հայրենիքի պաշտպաններին, ճանաչված այլ անձանց:

7. Թանգարանը գործում է հետևյալ կարգով

1) Թանգարան այցելությունը անվճար է և թույլատրվում է Համալսարանի աշխատանքային օրերին և ժամերին,

2) Թանգարանից օգտվելու իրավունք ունեն Համալսարանի բոլոր աշխատակիցները, դասախոսները, ուսանողները, ասպիրանտները, Համալսարանի հյուրերը, ինչպես նաև աշակերտներ, ուսուցիչներ, պատմության մասնագետներ, այլ անձինք՝ սույն կանոնակարգին համաձայն:

IV. Թանգարանի գործունեությունը համակարգող մարմինները

8.Թանգարանի գործունեությունը համակարգող մարմիններն են Թանգարանի խորհուրդը և պատասխանատուն:

9.Թանգարանի գործունեությունը ուղղորդելու, Համալսարանի ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական աշխատանքների հետ զուգորդելու, ինչպես նաև Թանգարանի համալրման գործընթացը խթանելու նպատակով ստեղծվում է Թանգարանի խորհուրդ, որի կազմը հաստատում է Համալսարանի ռեկտորը:

10. Թանգարանի խորհուրդը հաստատում է Թանգարանի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում տալիս նյութերն այլ ցուցահանդեսներում ներկայացնելու թույլտվություն, լսում է Թանգարանի պատասխանատուի հաշվետվությունը, կայացնում որոշումներ Թանգարանի գործունեության վերաբերյալ:

11. Թանգարանի պատասխանատուն նշանակվում է Համալսարանի ռեկտորի կողմից և կազմակերպում է Թանգարանի աշխատանքները:

12.Թանգարանի պատասխանատուն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) մշակում, հաշվառում և պահպանում է ցուցանմուշներն ու Թանգարանում առկա այլ նյութերը,

2) վարում է Թանգարանի գլխավոր մատյանը՝ որպես թանգարանային առարկաների և հավաքածուների հաշվառման հիմնական փաստաթուղթ,

3) ուսանողներին, աշակերտներին, դասախոսներին, ուսուցիչներին, այլ մասնագետների, Համալսարանի հյուրերին ու այցելուներին է ներկայացնում թանգարանային ցուցադրությունը՝ համապատասխան մեկնաբանություններով,

4) հայտնաբերում, հավաքում, նկարագրում, համադրում և վերլուծում է թանգարանային առարկաների և հավաքածուների վերաբերյալ հնարավոր տեղեկատվությունը,

5)քարոզչական, բացատրական աշխատանքներով, տարբեր խրախուսող նախաձեռնություններով ու ծրագրերով միջոցներ է ձեռնարկում Թանգարանի հավաքածուի համալրման ուղղությամբ՝ օգտագործելով զանգվածային լրատվության միջոցների, Համալսարանի www.gsu.am կայքի, սոցիալական կայքերի հնարավորությունները,

6)ծրագրեր է իրականացնում Թանգարանի հավաքածուի տպագիր և էլեկտրոնային վերարտադրման ու պահպանման, դրանց հանրայնացման ուղղությամբ: